«Դավիթ Անհաղթ»
Բժշկական կենտրոն
ՓԲԸ

Медицинский Центр
„Давид Анахт"
ЗАО

Ք. Երևան, Հ. Ներսիսյան 7. Հեռ. 28 – 63-20

N 17

«20» հունվարի 2014թ.

*ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով դեղորայքի և պատվաստանյութերի*
*գնման շրջանակային համաձայնագրեր*
*կնքած բոլոր մասնակիցներին*

«ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով կազմակերպված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում <<Դավիթ Անհաղթ>> ԲԿ ՓԲԸ-ի կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կետրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր ընկերության միջև կնքված N «ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով դեղորայքի գնման համաձայնագրով ապրանքներ:

Մատակարարման պայմաններն են՝

1. Հավելված 1-ի N 1-121 չափաբաժիններով ներկայացվում է սոցանապահով խմբում ընդգրկված բնակչությանը անվճար տրամադրվող դեղորայքի և պոլիկլինիկայի կաբինետներում հիվանդների բուժման համար օգտագործվող դեղորայքի ցանկը:

2. Հավելված 1-ի N 122-127 չափաբաժիններով ներկայացվում է անվճար, արտոնյալ պայմաններով տրամադրվող և հոգեմետ դեղորայքի ցանկը: Դեղատունը պետք է գտնվի ընկերության տեղակայման վայրից մինչև 1-1.5 կմ շառավիղի շրջանակներում, ունենա հոգեմետ դեղորայքի վաճառքի համար լիցենզիա, դեղորայքի պահպանման և պատրաստման համար անհրաժեշտ պայմաններ :

3. Վաճառողը տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի Ապրանքը հասցնում է Գնորդին ք. Երևան, Հ . Ներսիսյան 7 հասցեով, գնման ժամանակացույցով նախատեսված քանակությամբ և մատակարարման ժամկետում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Հ. Ներսիսյան 7 հասցեով, տնօրենի ընդունարան՝ մինչև գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվելու պահը:

Հայտը ներառում է «ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված №5), գնային առաջարկ, որը ներկայացվում է ապրանքի <u>միավորի գնով</u>

Հավելված №6): Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Հայտ պարունակող ծրարը ներկայացվում է փակ վիճակում, սոսնձված, ստորագրված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են 1 բնօրինակից և 2 պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտի հետ միասին ներկայացվում է նաև վերջինիս այդ լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնային առաջարկներ պարունակող ծրարները կբացվեն <<Դավիթ Անհաղթ>> ԲԿ ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Հ. Ներսիսյան 7 հասցեով, 2013 թվականի փետրվարի 1-ին, ժամը 13:30-ին:

Շրջանակային համաձայնագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ: Գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ, գները նվազեցնելու նպատակով, կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Հաղթողի ընտրությունը կկատարվի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կից ներկայացվում է կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Խնդրում եմ ծանուցումը ստանալիս էլեկտրոնային տարբերակով պարտադիր հաստատել ստացման մասին:

Առդիր՝ 33 էջ:

*Հարգանքով՝*

*Ա. Միսոյան*

Կատարող՝ Տաթևիկ Սարգսյան
Հեռ.՝ /055/ 04-04-87